ՀՀ ԿԳՄՄՆ

<<Երևանի Լեոյի անվան N 65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Հայ գրականություն

Մասնակից՝ Արարատ գյուղ Վ. Սարգսյանի անվան N1 միջնակարգ դպրոց

Լիլիթ Սաֆարյան

Թեմա՝ Խ. Աբովյանի << Վերք Հայաստանի>> վեպի <<Հառաջաբան>>-ի ուսուցումը

Ներածություն

Հայ գրականության մեջ շատ չեն այն գրողները, ովքեր ունեն գործունեության լայն ասպարեզ։Նրանցից է հայ նոր գրականության հիմանադիր Խաչատուր Աբովյանը՝ վիպասան, մանկավարժ, բանաստեղծ, առակագիր, դասագրքերի հեղինակ։

Հայաստանի վերքի երգիչը, մեծ մանկավարժը 1841 թվականին գրեց <<Վերք Հայաստանի>> վեպը , ինչը լույս տեսավ մահից տասը տարի անց՝ 1858 թվականին։

Աբովյանն իր <<Վերք Հայաստանի>> վեպում հայ ժողովրդի ըմբոստության ,նրա հերոսականության գաղափարն այնպես չէր արտահայտել , որ նկատելի չլիներ։ Շատ տանջանք ու տառապանք , շատ վերք ու վիշտ կա այդ գործում, բայց կա կռվի կոչ, կա հավատ ժողովրդի նկատմամբ։

Հովհաննես Թումանյանն այսպես է գնահատել վեպը։ <<Վերք Հայաստանի>>-ն եւ հայրենասերի ողբ է՝ կսկիծով, ու հառաջանքով լիքը, եւ ազգային դյուցազներգություն է...Եվ ամենը, ինչ-որ դուրս է գալիս նրա սրտից, նրա բերնից, նրա գրչի տակից, անկեղծ է, լիասիրտ ու ճշմարիտ , որովհետեւ ինքն ապրել , աչքով տեսել , ականջով լսել ու պատմել է>>։

Սույն ուսումնասիրությունն ունի հետազոտության օբյեկտ, այն է՝ <<Վերք Հայաստանի>> վեպի <<Հառաջաբանը>>։

Կատարված հետազոտական աշխատանքի նպատակն է վերլուծել << Հառաջաբան>>-ը՝ մեր նոր գրականության զարգացման ծրագիրը, ուր շարադրված են այն հիմնական սկզբունքները , որոնք կարեւորագույն նշանակություն պիտի ունենային արդեն սկսված գրական վերածննդի համար եւ չկորցնեին իրենց արդիականությունը ցայսօր։

Ուսումնասիրությունը կատարվել է վերլուծական մեթոդով։

Աշխատանքում կատարված ուսումնասիրությունները, վերլուծությունները, եզրակացությունը, հետազոտման արդյունքներն ունեն գործնական նշանակություն։

Սույն հետազոտական աշխատանքը բաղկացած է 3 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գիտական գրականության ցանկից։

Առաջին գլխում ներկայացված է մեծ լուսավորչի դերը աշխարհաբարի ստեղծման գործում։

Երկրորդ գլխում ներկայացրել եմ վեպի բաղկացուցիչ մասերը՝ առանձնացնելով << Հառաջաբան>>-ը։

Երրորդ գլխում ի մի եմ բերել այն ուսուցման մեթոդները , որոնցով ուսուցանում եմ տվյալ նյութը։

Գլուխ 1

Խաչատուր Աբովյանը՝ հայ նոր գրականության հիմնադիր

60-ական թվականների հասարակական շարժման կարեւոր կողմերից մեկն, այսպես կոչված գրապայքարն էր, արսինքն ՝ պայքարն աշխարհաբար լեզվի իրավունքների համար, որ Աբովյանի <<Վերք Հայաստանի>> վեպի եւ <<Հյուսիսափայլ ամսագրի, արեւմտահայ իրականության մեջ՝ <<Մեղու>> հանդեսի եւ այլ պարբերականների ու գեղարվեստական երկերի հրատարակությամբ շուտով վերջնական հաղթանակի պիտի հասներ։

Հնի դեմ եւ նորի օգտին տարվող ընդհանուր պայքարի կենտրոնական հարցերից մեկը հասկանալի լեզվով գրականություն ստեղծելու եւ գրական լեզվի միջոցով ժողովրդի մշակութային կյանքի մակարդակը բարձրացնելու պահանջն է։

Խաչատուր Աբովյանը մեծ հիացմունքով է խոսում գրաբարի մասին եւ բազմիցս էլ նշում նրա արժանիքները. <<Մեր գրաբար լեզուն անգին է, -ասում է նա,-նմանը

չունի, ինչքան լեզու էլ որ գիտեմ, մեկն էլա էն համր , էն քաղցրությունը , էն ճոխությունը չունի, բայց մեր վատ բախտիցը հազարիցը մեկը չի հասկանում, ինչ պետք է արած>>[1]:

Լեզվի արժեքն ու նշանակությունը տեսնելով՝ նրա բուն էության, մտքեր փոխանակելու, հաղորդակցվելու , միմյանց հասկանալու եւ հասկանալի լեզվով հասարակական կյանքը, մշակույթը, գրականությունը զարգացնելու մեջ Խաչատուր Աբովյանը ազդարարեց . <<Որքան էլ հին հայերենն իր արտակարգ հարստության, իր կատարելության եւ իր գրական արժեքի կողմից բարձր լինի, այնուամենայնիվ, այդ լեզուն է միակ արգելակող պատճառը, որ խեղճ ժողովուրդը մինչեւ հիմա զուրկ է մնացել զարգացման միջոցներից>>[3]:

Ալ. Մարգարյանը նշում է, որ Խաչատուր Աբովյանի մեծագույն ծառայություններից մեկն էլ այն է, որ հենց հայ հասարակական կյանքի բավական բարդ ու դժվարին պայմաններում ընդդեմ գրաբարի եւ հօգուտ աշխարհաբարի սկսեց տեսական ու գործնական ուժեղ պայքար, առաջինը տվեց գրաբարը աշխարհաբարով փոխարինելու անհրաժեշտության գիտական հիմնավորումը, առաջինը գիտակցորեն մերժեց գրաբարը եւ գրեց աշխարհաբար[2]:

Եվ ահա Խաչատուր Աբովյանի ստեղծած <<Վերք Հայաստանի>> պատմական վեպը իր հռչակագիր -առաջաբանով ու վեհ գաղափարներով, թե՛ բանաստեղծություններով, թե՛ պատմվածքներով, թե՛ <<Պարապ վախտի խաղալիքը>>, թե՛ <<Նախաշավիղը>> իր բովանդակությամբ, թե՛ փոխադրությունները, թե՛ թարգմանությունները, թե՛ << Հազարափեշեն>> պոեմը , թե՛ << Պատմություն Տիգրանի>> վեպը , թե՛ <<Ֆեոդորա կամ որդիական սեր>> մեկ գործողությամբ պիեսը իրենց բովանդակությամբ, վեհ գաղափարներով, ուսուցանող նյութերով ապահովեցին աշխարհաբարի տեղը հայ գրականության մեջ:

[1]Տես՝ Խ. Աբովյան ԵԼԺ, հ.2, էջ189

[2]Տես՝Ալ. Մարգարյան, «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը», Երևան 1958, էջ 69

[3]Տես՝ Խ. Աբովյան ԵԼԺ, հ.5, էջ 46

Գլուխ 2

«Վերք Հայաստանի» վեպի կառուցվածքը: «Հառաջաբան»-ում առաջադրվող խնդիրները

Երբ ուսումնասիրում ենք, ծանոթանում մեծ լուսավորչի կենսագրությանը, տեսնում ենք,թե ինչպիսի բարձր օժտվածության տեր, հանճարեղ անձնավորություն էր, ուներ մտավոր մեծ ընդունակություններ, լավ հիշողություն, աշխատասիրություն ու աշխատունակություն:

Խաչատուր Աբովյանի ստեղծագործության թագն ու պսակը «Վերք Հայաստանի» վեպն է: Այս վեպն իր ժանրով մեր գրականության մեջ առաջինն է: «Վերք Հայաստանի» վեպն ունի «Ողբ հայրենասերի» ենթավերնագիրը:

Ինչու՞ վերք, ինչու՞ ողբ, երբ Աբովյանը նկարագրում է ապասված պահը՝հայ ժողովրդի մի հատվածի ազատագրումը պարսկական բռնակալությունից և անցումը Ռուսաստանի գերիշխանության ներքո:

Պատմական այս վեպն ունի եռամաս կառուցվածք,«Հառաջաբան», «Զանգու», Հավելված:

«Հառաջաբան»-ը ոչ միայն այս վեպի ,այլև ամբողջ հայ նոր գրականության համար ունի կարևորագույն նշանակություն:

Առաջին մասն սկսվում է Հայաստանի ցրտաշունչ ձմռան ,այնուհետև՝ Քանաքեռ գյուղում բարեկենդանի տոնակատարության նկարագրությամբ:

Երկրորդ գլուխն սկսվում է Երևանի բերդի տպավորիչ նկարագրությամբ:Ներկայցվում է Աղասու և նրա ընկերների թափառումների հերոսական արկածները:

Երրորդ գլուխը նվիրված է Հայաստանում պարսկական տիրապետության վերջին մեկ-երկու տարիների դեպքերին: «...Ամեն կողմից պարսիկներն այնպես էին հանկարծ ոտք բարձրացնում ,որ հայերը դիմադրելու հնար չունեն»:

Վեպն ունի նաև « Զանգու »խորագրով հավելված:

Վեպն ավարտվում է այս տողերով .«Որքան շունչս ,արյունս դեռ կա,ես քուն ու հանգիստ ,ինձ համար փառք ու պատիվ,պարծանք կհամարեմ լոկ այն ,որ իմ կյանքը զոհաբերեմ իմ ազգի համար»[1]:

Այս գլխում ուզում եմ վերլուծել ,արժևորել ,գնահատել վեպի «Հառաջաբան»-ը ,իսկ ուսուցման մեջ նաև ցույց կտամ այն մեթոդները,որոնցով ես սովորեցնում եմ իմ աշակերտներին:

Աբովյանի բոցավառ հայրենասիրությունը, մեծ մարդասիրությունը երևում է այստեղ՝ «Հառաջաբան»-ում:

Աբովյանը խոսում է հասկանալի լեզվով և սրտամոտ բովանդակությամբ գիրք ստեղծելու մասին:Այդ նպատակով նա օգտագործում է Լիդիայի Կրեսոս թագավորի համր որդու լեզուն հանկարծակի բացվելու ավանդությունը՝ցանկանալով ասել,որ ահա բացվել է իր լեզուն և իր ժողովրդի համար պետք է գրի այս վեպը:

«Հառաջաբան»-ում երևում է Աբովյանի մեծ հայրենասիրությունը: Ինչպես Կրեսոսի համր որդին աղաղակեց, երբ տեսավ հոր վրա բարձրացված մահացու սուրը, այնպես էլ Աբովյանը,տեսնելով ժողովրդի անհուսալի վիճակը,աղաղակում է. «Այդ ու՞մ վրա եք թուր հանել,հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»[2]:

Աբովյանը տարբեր առիթներով փառաբանել է գրաբարի՝հին հայերենի հարստությունն ու գեղեցկությունը:

Այստեղ ավելացնում է ,որ ահա ժողովուրդը հեռացել է իր մայր լեզվից,ուստի անհրաժեշտ էր գրականության լեզու դարձնել հենց ժողովրդական կենդանի բարբառը:Աբովյանի օգտագործած Արարատյան բարբառն ընկավ գրական հայերենի հիմքում:Աբովյանը «Հառաջաբան»-ում գրում է,որ բոլոր մեծ,երևելի ազգերը երկու լեզու ունեն՝հին և նոր:

«Հառաջաբան»-ում մեծ լուսավորիչը չի մոռանում հիշատակել իր սիրելի բարեկամ, բժիշկ Սմբատյանին,որը մի անգամ հյուր էր եկել վիպասանին այն ժամանակ,երբ աշխատում էր «Հարաջաբան»ի վրա: Ընկերը ստիպում է,որ

[1]Տես՝ Խ. Աբովյան «Վերք Հայաստանի», Երևան 2016, էջ 324

[2]Տես՝ Խ. Աբովյան «Վերք Հայաստանի», Երևան 2016, էջ 20

կարդա,վերջում ավելացնում է.«Եթե այդպես շարունակեք,շատ հիանալի գործ կդառնա»[1]:

Ապա Աբովյանը խոստովանում է.«Նրա սուրբ բարեկամությանն եմ պարտական, որ համր, մունջ լեզուս բացվեց:...

Հայաստանը հրեշտակի նման առջևս կանգնել՝ ինձ թև էր տալիս...»[2]:

«Որդիական սերն էր ,որ բնության դրած շղթաներն այսպես ջարդեց ու փշրեց»,- եզրակացնում է Խաչատուր Աբովյանը:Հաջորդ տողերում արդեն վիպասանը տալիս է իր պատասխանը.«Ոչ թե քսան ,այլ երեսուն տարուց ավելի է,իմ պաշտելի ծնող ու հայր,իմ սիրելի ազգ ու ժողովուրդ ,որ սիրտս կրակ է ընկել,այրվում է,տոչորվում...Շատ անգամ ,մի հայ տեսնելիս,ուզում էի իմ ունեցած հոգին ու շունչը նրան տայի»:

<<Վերք Հայաստանի>> վեպն ունի մեծագույն նշանակություն մեր ամբողջ հայ գրականության մեջ, մեր ամբողջ մտավոր կյանքի, մեր անցյալի ողջ հոգևոր ժառանգության մեջ>>:

Լինելով մեր նոր գրականության զարգացման ծրագիրը՝ «Հառաջաբան»-ում շարադրված են այն հիմնական սկզբունքները, որոնք մեծագույն նշանակություն պիտի ունենային արդեն սկսված գրական վերածննդի համար:

Առաջինը լեզվի խնդիրն էր: Աբովյանն զգում էր, որ հոգևոր արժեքներին ժողովրդի խորթացման հիմնական պատճառը գրաբարն էր: Մեր նախնիների ոսկեղենիկ լեզուն, որ դեռևս պահպանվում էր գրականության մեջ, վաղուց անհասկանալի էր հանրությանը: Հարկավոր էր գրել այնպես,ինչպես խոսում էր ժողովուրդը:

Իսկ դրա համար մեծ քաջություն էր պետք: Աբովյանը կատարեց այդ <<սխրանքը>>՝ գրականության լեզու դարձնելով աշխարհաբարը, որի հիմքում ընկած էր ժողովրդի կենդանի խոսակցական լեզուն:

<<Ազգին պահողը լեզուն է և հավատը, թե դրանք էլ կորցնենք, վայն է եկել մեր օրին>>[3]:

[1,3]Տես՝ Խ. Աբովյան «Վերք Հայաստանի», Երևան 2016, էջ 18

[2]Տես՝ Խ. Աբովյան «Վերք Հայաստանի», Երևան 2016, էջ 19

<<Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցոլանում է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը>>[1]։

<<Աբովյանը գտնում է, որ չնայած հայ ժողովրդի գոյության, նրա մշակույթի ու լեզվի զարգացման չարաբախտ պատմական պայմաններին, զարմանալի են հայոց լեզվի հարստությունը, հզորությունն ու կատարելությունը։

Ինչքան էլ օտար լեզուներ ուսումնասիրենք, ամենից առաջ պետք է իմանանք մեր մայրենի լեզուն>>[2]։

Երկրորդ սկզբունքը վերաբերում է գրականության բովանդակությանը։ Ազգային գրականության արտացոլման ոլորտը պիտի ընդգրկի ժողովրդի պատմությունն ու ներկան, նրա կյանքը, նրա հոգսերն ու երազանքները։ Աբովյանը ցավով խոստովանում է, որ հայ մանուկներն օտար լեզվով գրքեր ավելի շատ են կարդում, քան հայերեն։ <<Պատճառն էլ շատ բնական էր. օտար լեզուներով նրանք կարդում էին երևելի, նշանավոր մարդկանց գործերի մասին, նրանք վարքն ու բարքը։ Նրանք կարդում էին այնպիսի ստեղծագործություններ, որոնք գրավում են ընթերցողի սիրտն ու հոգին, ուշադրությունը, իսկ այդպիսի պատմություններ ո՞վ չի սիրում։

Ո՞վ չի ուզում լսել, թե ի՞նչ է նշանակում սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը, պատերազմը, պայքարը։ Բայց հայոց գրքերում եթե այդպիսի բաներ կան, թող աչքս հանեն։ Էլ ինչո՞վ և ինչպես երեխային սիրելի դարձնես իր մայրենի լեզուն>>։

Երրորդ սկզբունքը գրականության հերոսի ընտրության հետ էր կապված։ Ժամանակի տիրապետող գրական ուղղությունը՝ կլասիցիզմը սահմանափակում էր հերոսի ընտրության հնարավորությունները. ըստ այդ ուղղության՝ սովորական մարդը իր կենսագրությամբ, առօրյայով, կենցաղով, իր խոհերով, զգացմունքներով չէր կարող դառնալ գրականության հերոս։ Ահա Աբովյանն իր վեպի հերոս է դարձնում հասարակ գյուղացու զավակ Աղասուն։

[1]Տես՝ Խ. Աբովյան «Երկերի լիակատար ժողովածու», հ.5, էջ 45

[2]Տես՝ Մ. Սանթրոսյան «Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյան», Երևան 1953, էջ 167

<<Բարեկենդանի օրն էր, աշակերտներիս դասերից հետո տուն ուղարկեցի։ Սկսեցի ինչոր գիտեի դեռ երեխա ժամանակներից, բոլորը մի տեղ հավաքեցի, ի մի բերեցի։ Վերջում հիշեցի
իմ ջահել-ջիվան Աղասուն, նրա հետ հարյուր քաջ տղերք, որ իրենց գլուխները բարձրացրին ու բոլորն էլ ուզում էին, որ իրենց մոտ գնամ։ Մյուսները տարիքն առած մարդիկ էին, շատերը նրանցից, փառք Աստծո ողջառողջ են։ Իսկ Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին մեռնեմ։ Ասացի ՝ կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի>>։

Այս երեք հիմնարար սկզբունքները նոր դարաշրջան բացեցին հայ ժողովրդի հոգևոր պատմության մեջ, սկզբնավորեցին լեզվով, ձևով ու բովանդակությամբ նոր մի գրականություն, որի շատ գաղափարներ իրենց կենսունակությունը պահպանում են նաև այսօր։

Գլուխ 3

«Հառաջաբան»-ի ուսուցումը

Այս գլխում ես կներկայացնեմ իմ մեթոդները։

Նախ ուսուցիչը կպարզաբանի «Հառաջաբան»-ի դերը ստեղծագործության մեջ և կառանձնացնի առաջադրած խնդիրները, կբացահայտի <<Հառաջաբան>>-ի դերը վեպի ուսուցման գործում, կզարգացնի աշակերտների վերլուծական կարողությունները <<Հառաջաբան>>-ի՝ որպես հայ նոր գրականության ծրագրի շուրջ կընդլայնի աշակերտների գիտելիքները գրաբարի և աշխարհաբարի՝ որպես հայերենի զարգացման փուլերի վերաբերյալ, կներկայացնի տեղեկություններ

<<Վերք Հայաստանի>>-ի վեպի մասին, աշակերտներին կնպատակաուղղի փնտրելու առնչություններ (Խորենացի, Նարեկացի, Ռաֆֆի)։

<<Վեպի Հառաջաբանը>> ուսուցանելիս օգտագործելու եմ այս մեթոդները՝ *մտագրոհ, քարտեզագրում, հեղինակի աթոռ, քարտային աշխատանք։*

Աշակերտը կնշի կենսագրական մանրամասներ ու փաստեր, կընդհանրացնի և հակիրճ կձևակերպի ստեղծագործության հիմնական գաղափարը, կապեր կստեղծի հեղինակի կյանքի,իրականության և վեպի մեջ նկարագրված իրադարձությունների միջև, կտարբերակի ոճական առանձնահատկություններ, կգնահատի հեղինակի մտքերի զարգացման ընթացքը, յուրովի կվերարտադրի ստեղծագործությունը, կկատարի հավելումներ (հորինել նոր ավարտ, հարցեր տալ հեղինակին, գրել խորհուրդ <<Վերք Հայաստանի>> վեպը կարդացողին)։

Կդրսևսորի սոցիալական հմտություններ՝ համբերատարություն, դիմացինի խոսքն ուշադիր լսելու, կարծիքը հարգելու, դիպուկ հարցեր ձևակերպելու կարողություն, քննարկումներին մասնակցելու, դասարանի առջև ելույթ ունենալու ունակություն, զուգահեռներ կանցկացնի ստեղծագործության հիմնական գաղափարի և իրականության ու կյանքի տարբեր դրսևորումների, ելույթների ու արժեքների հետ, կգնահատի և կարժևորի հայրենասիրությունը, արդարամտությունը,բարոյական բարձր հատկանիշներն ու արժեքները։

Դասի ընթացքում՝ խթանման փուլում ուսուցիչը *մտագրոհով* կշարժի, հետաքրքրություն կառաջացնի աշակերտների մոտ՝ առաջադրել նախապատրաստող հարցեր։ Ե՞րբ է գրվել <<Վերք Հայաստանին>>։ Ե՞րբ է լույս տեսել վեպը։ Քանի՞ մասից է բաղկացած։ Ինչի՞ մասին է <<Հառաջաբանը>>և ի՞նչ հարցեր է քննում։ Ի՞նչ է գրապայքարը։ Նրանք ի մի են բերումիրենց գիտելիքները կարճ ձևակերպումներով, հանդես են բերում հանդուրժողականություն։ Քարտային աշխատանք է տրվում 3-5 աշակերտի։ Այդ ընթացքում անցկացվում է մտագրոհ՝ ժամանակ շահելու համար։

Իմաստի ընկալման փուլում քարտային աշխատանք կատարող աշակերտները գրատախտակին գրում են հանձնարարություններ, իսկ այդ ընթացքում ուսուցիչն անցկացնում է մտագրոհ և քարտեզագրում: Այնուհետև ուսուցիչը ստուգում է:

Քարտային աշխատանք: Հայերենի զարգացման շրջանները,(գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար), տեղեկություններ դրանց մասին: <<Հառաջաբան>>-ում արտահայտված զգացմունքները(ազգասիրություն, ազգապահպանություն, հա,, սեր ազգի, ընթերցողի և մանուկների հանդեպ, հատուկ անուններ(Կրեսոս, Կյուրոս, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ, Հայկ, Նոյ, Էջմիածին, Հայաստան, Պղնձե քաղաք, Մասիս, Քուռ, Լիդիա): Խաչատուր Աբովյանին բնութագրող բառեր, բառակապակցություններ (ազգասեր, հայրենասեր, գեղարվեստասեր, բռնությունը ատող, զգացմունքային, ոգևորող մարդ, ազգապահպան հարցերով մտահոգվող մտավորական, գրաբարի փայլուն իմացություն, պատմական անցյալի հանդեպ հպարտությունն):

Կքարտեզագրեն <<Հառաջաբան>>-ի խնդիրները: Մինչ աշակերտները գրատախտակին կքարտեզագրեն <<Հառաջաբան>>-ի խնդիրները, լրացուցիչ առաջադրանք ունեցող աշակերտները կներկայացնեն այն՝ կարդալ բնագիրը լեզվին, բովանդակությանը վերաբերող հատվածները, կերպարը բնութագրող տողերը:

Այս ամենից հետո պետք է զարգացնել աշակերտների պատմելու ունակությունները:

Կպատմեն Աբովյանի անձնական կյանքին վերաբերող դրվագներ <<Հառաջաբան>>-ից: <<Էս միջոցումը մի քանի երեխեք>>, <<Մեկ բարեկենդանի աշակերտներիս բաց թողի>>, <<Մեկ երես բան չէի գրել, երբ մանկության բարեկամ Աղաֆոն Սմբատյանը ներս մտավ>>, <<Սիաթի 10-ն էր առավոտի>>:

Դասի բաղկացուցիչ մաս է նաև աշակերտների պատկերավոր մտածողության զարգացումը և բառապաշարի հարստացումը:

Կշռադատման փուլում այս նպատակին է ուղղված դուրս գրել փոխաբերություններն ու համեմատությունները:

Հեղինակի աթոռ: Ինչու՞ վերջում Աղասին չի սպանում Հասան խանին: Չէի՞ք վախենում, որ առաջինն էիք գրում աշխարհաբարը: Ո՞վ և ի՞նչը Ձեզ օգնեց, որ սկսեցիք գրել: Դուք՝ որպես ուսուցիչ, ինչպե՞ս եք վարվել չսովորող աշակերտների հետ: Ի՞նչ կարծիք ունեք <<Վերք Հայաստանի>> վեպի գրական արևելահայերենի վերածածա տարբերակի վերաբերյալ: Ինչու՞ են այսօր հայ երեխաները դժվարությամբ կարդում <<Վերք Հայաստանի>> վեպը: Ի՞նչ խորդուրդ կտաք չկարդացող աշակերտին:

Ինչպես նաև կհանձնարարեմ <<Հառաջաբանից>> դուրս գրել հարցական նախադասությունները, առածները և դարձվածքները:

Ինչու՞ վերջում Աղասին չի սպանում



Չէի՞ք վախենում, որ առաջինն էիք գրում աշխարհաբարը:

Ի՞նչ խորդուրդ կտաք չկարդացող աշակերտին:

Եզրակացություն

Որպես ամփոփում՝ կարելի է եզրակացնել, որ <<Վերք Հայաստանի>> վեպի և <<Հառաջաբանի>> ուսուցումը էական դեր ունի սովորողի մտածողության ձևավորման վրա։

Լինելով մանկավարժ՝ ես այսուհետ կյանքի կկոչեմ Խաչատուր Աբովյանի՝ որպես մանկավարժի փորձը, որի նպատակը համակողմանի դաստիարակությունն էր։ Նրա գաղափարախոսությունն էր ազգասեր, հայրենիքը լավագույնս ճանաչող, նրա արժեքները գնահատող անհատներ դաստիարակելը։ Այդ գաղափարախոսության առանցքը, ըստ իս, նաև վեպի, նրանում արծարծված արժեքների գնահատումն ու վերհանումն է՝ որպես ազգային հարստություն։

Ըստ իս՝ այն նպաստում է սովորողի արժեհամակարգի ձևավորմանը, ներդնում վեհ գաղափարներ՝ հայրենասիրություն, ազգասիրություն։

Պատմական այս ժամանակաշրջանում, երբ Հայաստանը դարձյալ գտնվում է աշխարհաքաղաքական նոր մարտահրավերների դեմ հանդիման, Աբովյանի վեպը արդիական է իր հարցադրումներով, պատասխաններով, որոնք կարող են դրական ազդել մերօրյա գործընթացների զարգացումների վրա ՝ տարբերակելով գլխավորը երկրորդականից։

<<Հառաջաբան>>-ը այսօր շատ արդիական է, ուստի անհրաժեշտ է այնպիսի մեթոդներով ուսուցանել, որը կխթանի, կբարելավի սովորողի մտածողությունը՝ թույլ տալով ճշգրիտ եզրահանգումներ անել, նրանում արծարծված խնդիրները մերօրյա իրականության հետ փոխադարձ կապերում դիտարկել, վերլուծել, և, ի վերջո, այդ ամենը կենսագործել։

Ես ավելի քան համոզված եմ, որ <<Հառաջաբանի>> ուսուցմամբ, Աղասու կերպարով կուղղորդեմ իմ սաներին լինել ազգի նվիրյալներ, հայրենապաշտպաններ։ Իսկ Աղասու օրինակով կդառնան մերօրյա Աղասիները։

Մի՞թե այսօր չկան Աղասիներ…

Օգտագործված գրականության ցանկ

1.Ալ. Մարգարյան «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը», Երևան 1958

2.Հրայր Մուրադյան «Խաչատուր Աբովյան», Երևան 1963

3.Մ. Սանթրոսյան «Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը», Երևան 1953

4.Խաչատուր Աբովյան «Վերք Հայաստան», Երևան 2016

5.Խ. Աբովյան «Երկերի լիակատար ժողովածու», հ.2, 5

Բովանդակություն

Ներածություն……2

Գլուխ 1:Խաչատուր Աբովյանը՝ հայ նոր գրականության հիմնադիր…3

Գլուխ 2:«Վերք Հայաստանի» վեպի կառուցվածքը: «Հառաջաբան»-ում առաջադրվող խնդիրները……..5

Գլուխ 3:«Հառաջաբան»-ի ուսուցումը……..9

Եզրակացություն……13

Օգտագործված գրականության ցանկ……....14